ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Դեկտեմբեր 22-ի թիվ 5/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային, դրամաշնորհային և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի
2013թ. մարտի 22 -ի թիվ 5/3 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 19.03.2012թ.-ի 6/01 թիվ որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող՝ օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի ուսումնասիրությունը:

Վերահսկողության առարկան՝ Վարկային, դրամաշնորհային միջոցների օգտագործմանն ուղղված գործարքներն ու ընթացակարգերը:

Վերահսկողության օբյեկտները՝ «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ) և ծրագրերի իրականացմանն առընչվող այլ սուբյեկտներ:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 19.02.2012-30.12.2012թթ.:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝ 2009թ. հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը: Դիտարկման փուլում իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, կիրառվել են տարբեր տվյալների

(քանակական և որակական) համադրման/համեմատման մեթոդներ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքները՝

Դիտարկման փուլում ուսումնասիրվել են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում կնքված պայմանագրերը, որոնց մասով վճարումները կազմում էին 5.3 մլրդ դրամ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Դիտարկման փուլում ընդգրկված ծրագրի շրջանակներում փաստացի վճարումները

Հազ.դրամ

Ծրագրերի անվանումը	*Պայմանագրի արժեքը*	*Կատարողականը*	*Փաստացի վճարում*
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Սևանա լճի բնապահպանական ծրագիր» Շինարարական աշխատանքներ	*7,547,622.9*	*5,496,737.9*	*5,289,998.2*

Դիտարկման փուլի արդյունքում ընտրանքային կարգով ստուգում է իրականացվել ***Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Վարդենիս քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման*** աշխատանքների նկատմամբ:

2007թ. ապրիլի 26-ին «Սևանա Լճի Բնապահպանական ծրագրի» շրջանակներում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջև կնքվել են վարկային և դրամաշնորհային համաձայնագրեր: Ծրագրի նպատակն է՝ Սևանա լիճ թափվող կեղտաջրերի արտանետումների ծավալների կրճատումը և դրանց մաքրումը: Համաձայնագրերով նախատեսված ներդրումների ծավալը ՎԶԵԲ-ի մասով կազմում է 12 մլն եվրո, որից 7 մլն եվրո՝ վարկային, 5 մլն եվրո՝ դրամաշնորհային միջոցներ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը կազմում է 1.76 մլն եվրո: Ծրագրի շրջանակներում կառուցվել է շուրջ 52 կմ կոյուղացանց՝ Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ջերմուկ քաղաքներում, 3 պոմպակայան՝ Սևան և Գավառ քաղաքներում, կեղտաջրերի մաքրման 3 կայան՝ Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում: Նշված շինարարական աշխատանքներից ընտրանքային կարգով ստուգվել են կեղտաջրերի մաքրման կայանների նախագծման և կառուցման աշխատանքները:

2009թ. հունիսի 23-ին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (Պատվիրատու) կողմից հայտարարվել է միջազգային մրցույթ՝ Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կոյուղու մաքրման կայանների նախագծման և կառուցման նպատակով: Հայտարարված մրցույթով պահանջվում էր կեղտաջրերի մաքրման կայանների նախագծում կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման եղանակներով, իսկ կառուցումը՝ միայն մեխանիկական մաքրման եղանակով: Մրցույթին մասնակցել են երեք հայտատուներ՝ հետևյալ գնառաջարկներով՝

1. Ludwig Pfeiffer Hoch- und Tiefbau GmbH (Գերմանիա) - 3,923.92հազ.եվրո, առանց ԱԱՀ,
2. Սաղե-Բլեսկ կոնսորցիում - 4,802.49հազ.եվրո, առանց ԱԱՀ,
3. Սահակյանշին ՓԲԸ - Ֆարմեքս Թեքնոլոջիս կոնսորցիում - 3,793.37հազ.եվրո, առանց ԱԱՀ:

Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել Ludwig Pfeiffer Hoch- und Tiefbau GmbH&Co.KG (այսուհետ՝ Կապալառու) ընկերությունը՝ 3,923.92հազ.եվրո գնառաջարկով: 27.01.2010թ.-ին Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքվել է թիվ LSEP-WWTP-2009 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3,923.92հազ.եվրո ընդհանուր գումարով, որի կատարողականը կազմում է 3,906.47հազ.եվրո, ԱԱՀ-ով՝ 4,690.0հազ. եվրո:

Ստուգմամբ պարզվեց, որ համաձայն Պայմանագրի, Կապալառուի կողմից կեղտաջրերի մաքրման կայաններում պետք է մոնտաժվեին միայն գերմանական կամ իտալական արտադրության սարքավորումներ, ***սակայն մաքրման կայաններում փաստացի մոնտաժված սարքավորումների որոշ մասը թուրքական արտադրության են:*** Տեխնիկական վերահսկողի և Պատվիրատուի համաձայնությամբ պայմանագրով նախատեսված գերմանական կամ իտալական արտադրության սարքավորումները փոխարինվել են թուրքականով՝ ***առանց պայմանագրային գումարի համապատասխան փոփոխության:***

Շինարարական աշխատանքների մասով արձանագրվել են հետևյալ խախտումները՝

Տանիքների գծագրերում ***բացակայում են*** երկայնական կտրվածքները, հանգույցների անհրաժեշտ մանրամասները ***թերի են: Բացակայում են*** շինարական նյութերի մասնագրերը, բնութագրերը և որոշ հանգույցներ:

Նախագծի կազմում *ներկայացված չեն* մաքրման կայանների կառուցման տեղամասերի բարեկարգման, արտաքին լուսավորության, ուղղաձիգ և հորիզոնական հատակագծման (տեղակապման), մոտեցնող և ներհրապարակային ճանապարհների նախագծային մշակումները: *Բացակայում են* համալիրի ավտոմատիկայի և ճաղավանդակային շենքի ջեռուցման համակարգի նախագծերը, որը պահանջվում է նախագծային առաջադրանքով:

Նախագծի փորձաքննությունն իրականացվել է «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից: Նախահաշվային մասը *չի ներկայացվել փորձաքննության*: Փորձաքննության եզրակացության դիտողությունները և լրամշակումները, որոնք պետք է կատարվեին մինչև նախագծի հաստատումը, *չեն իրականացվել և չեն ներկայացվել կրկնակի փորձաքննության*: Նախագծանախահաշվային փաստաթղթերը *համաձայնեցված չեն* տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝

- բացակայում է Գավառ քաղ. շինարարության թույլտվությունը:
- Մարտունի և Վարդենիս քաղաքների շին. թույլտվությունները տրվել են 2011թ. մայիսին՝ 10 ամիս ժամկետով, սակայն շինարարությունը մինչ օրս ավարտված չէ:

Շինարարության նորմերի ընդունման մասով *բացակայում են*՝

- օգտագործված շինարարական նյութերի որակի հավաստագրերը,
- շենքի առանցքների նշահարման ակտերը,
- արտաքին ինժեներական ցանցերի կատարողական գծագրերը:

Շինարարության ընթացքում որոշ հատվածներում *անորակ են կատարվել* ասֆալտբետոնե ծածկի (Վարդենիս) աշխատանքները՝ 18.9հազ.եվրո գումարով:

Վարման մատյանը *լրացված է թերի, սահմանված կարգի խախտումներով:*

Տեխնիկական հսկողությունն իրականացվել է *թերի*: Խախտվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ. թիվ 44 հրամանի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի» պահանջները:
Հեղինակային հսկողությունն իրականացվել է *թերի*: Խախտվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.09.1998թ. թիվ 143 «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողություն իրականացման հրահանգի» պահանջները:

Գավառ, Մարտունի, Վարդենիս քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման ընթացքում *չեն իրականացվել հետևյալ աշխատանքները (ընդհանուր 190, 6 հազ. եվրո գումարով)*՝

- արհեստանոցի սարքավորումներ – 10.0 հազ.եվրո x 3՝ **30.0 հազ.եվրո,**
- տարածքի դրենաժ – 5.0 հազ.եվրո x 3՝ **15.0 հազ.եվրո,**
- հեղեղումից պաշտպանող միջոցառումներ – 2.2 հազ.եվրո x3՝ **6.6հազ. եվրո,**
- գործիքավորում և վերահսկում – **64.3հազ.եվրո,**
- Վարդենիս քաղաքում գլխավոր ճանապարհից դեպի ԿՋՄԿ-ներ տանող 900մ երկարությամբ հատվածը չի իրականացվել – **45.9 հազ.եվրո,**
- անձրևաջրերի հեռացման համակարգ - 9. 6 հազ.եվրո x 3՝ **28.8հազ.եվրո:**

Արդյունքում, շինարարական աշխատանքների ամբողջական գումարային խախտումները (ներառյալ՝ ԱԱՀ) *կազմում են 251.4հազ. եվրո*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Մաքրման կայաններում փաստացի մոնտաժված սարքավորումների որոշ մասը թուրքական արտադրության են՝ պայմանագրով նախատեսված գերմանական կամ իտալականի փոխարեն, բացակայում է այդ մասով պայմանագրային գումարի համապատասխան փոփոխությունը:
- Տանիքների գծագրերում բացակայում են երկայնական կտրվածքները, հանգույցների անհրաժեշտ մանրամասները թերի են: Բացակայում են շինարական նյութերի մասնագրերը, բնութագրերը և որոշ հանգույցներ:
- Նախագծի կազմում ներկայացված չեն մաքրման կայանների կառուցման տեղամասերի բարեկարգման, արտաքին լուսավորության, ուղղաձիգ և հորիզոնական հատակագծման (տեղակապման), մոտեցնող և ներհրապարակային ճանապարհների նախագծային մշակումները: Բացակայում է համալիրի ավտոմատիկայի և ճաղավանդակային շենքի ջեռուցման համակարգի նախագծերը:
- Նախագծի նախահաշվային մասը չի ներկայացվել փորձաքննության: Փորձաքննության եզրակացության դիտողությունները և լրամշակումները չեն իրականացվել և չեն ներկայացվել կրկնակի փորձաքննության: Նախագծանախահաշվային փաստաթղթերը համաձայնեցված չեն տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Վարման մատյանը լրացված է թերի, սահմանված կարգի խախտումներով:

- Շինարարության նորմերի ընդունման մասով բացակայում են մի շարք փաստաթղթեր:
- Շինարարության ընթացքում որոշ հատվածներում արձանագրվել են 18,900 եվրո գումարի անորակ աշխատանքներ, 190.6հազ.եվրո գումարի չկատարված աշխատանքներ: Շինարարական աշխատանքների ամբողջական գումարային խախտումները կազմում են 251.4 հազ.եվրո:
- Տեխնիկական և հեղինակային հսկողությունն իրականացվել է թերի՝ սահմանված պահանջների խախտումով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

<u>«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝</u>

- Ապահովել նախագծերի նախահաշվային փաստաթղթերի պատշաճ փորձաքննությունը և նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցումը համապատասխան մարմինների հետ:
- Ապահովել շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության պատշաճ իրականացումը:
- Ձեռնարկել միջոցներ՝ արձանագրված անորակ և չկատարված աշխատանքների, ինչպես նաև կրկնակի վճարված աշխատանքների վերականգնման ուղղությամբ:

«ՀՀ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի գ) ենթակետի համաձայն, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկություն՝ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/3 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
Նախագծի կազմում ներկայացված չեն մաքրման կայանների կառուցման տեղամասերի բարեկարգման, արտաքին լուսավորության, ուղղաձիգ և հորիզոնական հատակագծման /տեղակապման/, մոտեցնող և ներհրապարակային ճանապարհների նախագծային մշակումները: Բացակայում են համալիրի ավտոմատիկայի և ճաղավանդակային շենքի ջեռուցման համակարգի նախագծերը:	Ընդունվել է:	Մշակվել և ներկայացվել են բարեկարգման, արտաքին լուսավորության, ուղղաձիգ և հորիզոնական հատակագծման, մոտեցնող և ներհրապարակային ճանապարհների ու ավտոմատիկայի, ջեռուցման համակարգերի գծագրերը:
Նախահաշվային մասը չի ներկայացվել փորձաքննության: Փորձաքննության եզրակացության դիտողությունները և լրամշակումները, որոնք պետք է կատարվեին մինչև նախագծի հաստատումը, չեն իրականացվել և չեն ներկայացվել կրկնակի փորձաքննության:	Նախահաշվային փաստաթղթերը չեն ներկայացվել փորձաքննության, որովհետև համաձայն ՖԻԴԻԿ դեղին գրքի՝ այն կազմված է ընդհանուր խոշորացված գումարներով:	Համաձայն Փորձաքննության եզրակացության դիտողությունների՝ Նախագիծը լրամշակվել և ներկայացվել է կրկնակի փորձաքննության:
Մաքրման կայաններում փաստացի մոնտաժված սարքավորումների որոշ մասը թուրքական արտադրության են՝ պայմանագրով նախատեսված գերմանական կամ իտալականի փոխարեն, բացակայում է այդ մասով պայմանագրային գումարի համապատասխան փոփոխությունը:	Մաքրման կայաններում փաստացի մոնտաժված սարքավորումները գերմանական են՝ բացառությամբ ճաղավանդակների, որոնք թուրքական արտադրության են և պահանջված տեխնիկական պարամետրերն ունեն: Այդ մասով պայմանագրային գումարի համապատասխան փոփոխություն չի առաջանում:	-
Նախագծային փաստաթղթերը համաձայնեցված չեն տեղական ինքնակառավարման մարմինների հետ. 1. Բացակայում է Գավառ քաղաքի շինարարության թույլտվությունը, 2. Մարտունի և Վարդենիս քաղաքների շին. թույլտվությունները տրվել են 2011 թ. մայիսին՝ 10 ամիս ժամկետով, սակայն շինարարությունը մինչ օրս ավարտված չէ:	Ընդունվել է:	Նախագծային փաստաթղթերը արդեն իսկ համաձայնեցված են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների հետ. 1. Գավառ ԿՄԿ-ի շինարարության թույլտվությունը արդեն իսկ տրվել է քաղաքապետարանի կողմից. 2. Մարտունի և Վարդենիս քաղաքների շին. թույլտվություններն երկարաձգվել են մինչև պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտը:
Բացակայում են 1. Օգտագործված շինարարական նյութերի որակի հավաստագրերը 2. Շենքի առանցքների նշահարման ակտերը 3. Արտաքին ինժեներական ցանցերի կատարողական	1. Որակի հավաստագրեր չեն ներկայացվել միայն որոշակի օգտագործված շինարարական նյութերի համար 2. Շենքերի առանցքների նշահարման ակտերը կազմված են եղել, սակայն չեն հաստատվել 3. Արտաքին ինժեներական ցանցերի կատարողական գծագրերը	1. Օգտագործված որոշակի շինարարական նյութերի որակի հավաստագրերը լրացուցիչ ներկայացվել են. 2. Շենքերի առանցքների նշահարման ակտերը կազմվել և ներկայացվել են լրացուցիչ,

գծագրերը	գտնվում են պատրաստման փուլում	3. Արտաքին ինժեներական ցանցերի կատարողական գծագրերն արդեն իսկ ներկայացվել են:
Վարման մատյանը լրացված է թերի, սահմանված կարգի խախտումներով:	Ընդունվել է:	Վարման մատյանը լրացվել է ամբողջովին և վերացվել են թույլ տրված շեղումները:
Տեխնիկական և Հեղինակային հսկողությունները իրականացվել են թերի:	Հեղինակային հսկողություն պայմանագրով նախատեսված չի եղել	Տեխնիկական հսկողության իրականացման ընթացքում բաց թողնված թերությունները շտկվել են:
Շինարարության ընթացքում որոշ հատվածներում արձանագրվել են 18,900 եվրո գումարի անորակ աշխատանքներ (Վարդենիսի ԿՄԿ-ի տարածքի ասֆալտբետոնե ծածկի տեղադրման աշխատանքներ), 190.6 հազ. եվրո գումարի չկատարած աշխատանքներ (արհեստանոցի սարքավորումներ, տարածքի դրենաժ, հեղեղումից պաշտպանող միջոցառումներ, գործիքավորման վերահսկում, Վարդենիս քաղաքում գլխավոր ճանապարհից դեպի ԿՄԿ տանող 900 մ երկարությամբ մոտեցնող ճանապարհի հատված, անձրևաջրերի հեռացման համակարգ):	Արհեստանոցի սարքավորումները մատակարարված են եղել մասամբ: Շինարարական աշխատանքների ընթացքում ձեռնարկվել են միջոցառումներ գրունտային ջրերի մակարդակն իջեցնելու համար, որպեսզի վարչական և ճաղավանդակային շենքերի հիմքերի տեղադրման աշխատանքներն իրականացվեն չոր պայմաններում: Հեղեղումից պաշտպանվելու համար նախատեսված է եղել հենապատերի տեղադրում գաբիոններից: Կոյուղու մաքրման կայանների մուտքի և ելքի մասերում /հոսքաչափի հոր/ տեղադրված են ավտոմատ սարքավորումներ, որոնք կատարում են կեղտաջրերի մաքրման հոսքերի չափագրում, որը տվյալները հաղորդում է համակարգչին և վերահսկվում օպերատորի կողմից: Մոտեցնող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները չեն իրականացվել եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով: Ջրհորդաններին կից ձագարների և ջրահեռացման կանգնակների տեղադրումը նույնպես չեն իրականացվել եղանակային անբարենպաստ պայմաններից ելնելով: Աշխատանքներն իրականացվել են աշնան եղանակային անբարենպաստ պայմաններում, որի արդյունքում ասֆալտբետոնե ծածկի մանրահատիկ շերտը տեղադրվել է թերություններով:	Ակտով արձանագրված արհեստանոցի սարքավորումների, տարածքի դրենաժի, հեղեղումից պաշտպանող միջոցառումների, ինչպես նաև գործիքավորման վերահսկման աշխատանքներն ամբողջությամբ իրականացված են: Միաժամանակ ակտով արձանագրված և անորակ համարված Վարդենիսի ԿՄԿ-ի տարածքի, Վարդենիս քաղաքում գլխավոր ճանապարհից դեպի ԿՄԿ տանող 900 մ երկարությամբ հատվածի չիրականացված ասֆալտապատման, ինչպես նաև անձրևաջրերի հեռացման համակարգի աշխատանքները, համաձայն անավարտ աշխատանքների և թերությունների ցանկի, կիրականացվեն մինչև 2013 թվականի մայիսի 30-ը: